

ՀՐԱՄԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ք. Երևան

N 2867 - Ա

«28» հոկտեմբեր 2013թ.

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ «ԱԿՐԻԻՆԻՆ ՖԱՐՄԱՍՅՈՒՏԻԿԱԼՍ ՔՈ.»
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ «ՄԻԿՈՂՈՐԱԼ ԴԵՂԱՀԱՏԵՐ 200ՄԳ N30»,
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ «ԱՐՓԻՄԵԴ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ
«ԿԵՏՈԿՈՆԱԶՈԼ ԴԵՂԱՀԱՏԵՐ 200ՄԳ, N10», ՀՆԴԿԱՍՏԱՆԻ «ՆԱԲՐՈՍ ՖԱՐՄԱ
ՊՎՏ.ՍՊ» ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ «ԱՆՏԻԳՐԻԲՈԿ ՆԻՋՈՄԱՔՍ
ԴԵՂԱՀԱՏԵՐ 200ՄԳ, N10», ԻՏԱԼԻԱՅԻ «ՅԱՆՍԵՆ-ՍԻԼՎԱԳ Ս.Պ.Ա., ՋՈՆՍՈՆ ԵՎ
ՋՈՆՍՈՆ ՍՊԸ, ՌՈՒՍԱՍՏԱՆ-Ի ՀԱՄԱՐ» ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ
«ՆԻՋՈՐԱԼ ԴԵՂԱՀԱՏԵՐ 200ՄԳ, N10, N30» ԴԵՂԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՆՎԱԿԵՐ ՃԱՆԱԶԵԼՈՒ, ԴՐԱՆՑ
ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԵՏՀԱՎԱՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 15-ի N 1300-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 12-րդ կետի «դ» ենթակետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 25-ի «Հայաստանի Հանրապետությունում դեղերի պետական գրանցման կարգը և դեղերի պետական գրանցման փորձաքննության վարձի չափերը հաստատելու մասին» N 347 որոշմամբ հաստատված կարգի 30-րդ կետի «գ» ենթակետը, միջազգային մասնագիտական աղբյուրներից՝ Եվրոպայի դեղագործակալություն և ԱՄՆ Դեղերի և սննդի վարչություն, ստացված գրությունները, ՀՀ ԱՆ դեղաբանական խորհրդի 2013 թվականի օգոստոսի 9-ի թիվ 057 նիստի արձանագրության 2-րդ կետը, ՀՀ ԱՆ «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի 2013 թվականի օգոստոսի 13-ի թիվ 0301109413 գրությունը և այն որ կետոկոնազոլ պարունակող ներքին ընդունման դեղաձևերի օգուտ/ռիսկ հարաբերակցությունը՝ լյարդաթունայնության դեպքերի հաճախացման և վտանգավորության աճի պատճառով գնահատվում է բացասական.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Անվավեր ճանաչել Ռուսաստանի Դաշնության «Ակրիխին Ֆարմայութիկալս Քո.» ընկերության արտադրության «Միկոզորալ դեղահատեր 200մգ N30», Հնդկաստանի «Նաբրոս Ֆարմա ՊՎՏ., ՍՊ» ընկերության արտադրության «Անտիգրիբոկ Նիզոմաքս դեղահատեր 200մգ N10», Հայաստանի Հանրապետության «Արփիմեդ» սահմանափակ պատասխանատվության ընկերության «Կետոկոնազոլ դեղահատեր 200մգ (10)», Իտալիայի «Յանսեն-Սիլագ Ս.Պ.Ա., Ջոնսոն և Ջոնսոն ՍՊԸ, Ռուսաստան-ի համար» ընկերության արտադրության «Նիզորալ դեղահատեր 200մգ N10 և N30» դեղերի գրանցումը և դադարեցնել դրանց շրջանառությունը Հայաստանի Հանրապետությունում:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Հ. Թոփչյանին՝

1) ապահովել սույն հրամանի առաջին կետում նշված դեղերի՝ Հայաստանի Հանրապետության «Դեղերի պետական գրանցամատյանից» հանելու գործընթացի իրականացումը:

3. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ. Բաբախանյանին՝

1) ապահովել մասնագիտական և պաշտոնական զանգվածային լրատվության միջոցներում համապատասխան տեղեկատվության հրապարակումը:

4. «Ալֆա Ֆարմ», «Ալֆա Ֆարմ Իմպորտ» փակ բաժնետիրական ընկերություններին և «Նատալի Ֆարմ», «Վագա Ֆարմ», «Արմֆարմ», «Լամբրոն – Ֆարմիմպեքս», «Նյու Ինթերնեյշնլ Բիզնես Ֆարմ» և «Արփիմեդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին՝

1) Ապահովել Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում Ռուսաստանի Դաշնության «Ակրիխին Ֆարմայութիկալս Քո.» ընկերության արտադրության «Միկոզորալ դեղահատեր 200մգ N30», Հնդկաստանի «Նաբրոս Ֆարմա ՊՎՏ., ՍՊ» ընկերության արտադրության «Անտիգրիբոկ Նիզոմաքս դեղահատեր 200մգ N10», Հայաստանի Հանրապետության «Արփիմեդ» սահմանափակ պատասխանատվության ընկերության «Կետոկոնազոլ դեղահատեր 200մգ (10)», Իտալիայի «Յանսեն-Սիլագ Ս.Պ.Ա., Ջոնսոն և Ջոնսոն ՍՊԸ, Ռուսաստան-ի համար» ընկերության արտադրության «Նիզորալ դեղահատեր 200մգ N10 և N30» դեղերի

շրջանառության դադարեցման և հետհավաքման գործընթացը և այդ մասին տեղեկատվության տրամադրումը Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

5. ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի քարտուղարության պետ Ջ. Դարբինյանին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի օրինակի հանձնումը սույն վարչական ակտի հասցեատերերին:

6. Սույն հրամանը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում (վարչական ակտն ուժի մեջ մտնելու օրվանից 6 ամսվա ընթացքում) կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

Սույն հրամանը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 71-րդ հոդվածով սահմանված ժամկետում կարող է բողոքարկվել ՀՀ Վարչական դատարան:

ԴԵՐԵՆԻԿ ԴՈՒՄԱՆՅԱՆ

